ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԻՒՂՈՒՄ

ՄՈԳԱԿԱՆ ԼԱՊՏԵՐՈՎ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ։ Ժողովրդական ընթերցանութեան գործը մեզ մօտ միայն փորձերի շրջանի մէջն է և շատ նոր է։ Մի քանի տեղերում միայն ծխական ուսումնարանների ուսուցիչները, ըմբռնած լինելով գործի օգտակարութիւնը, այս վերջին երկու տարիներում փորձեն փորձել ժողովրդական դասախօսութիւններ կարդալ հասարակութեան առաջ շատ թէ քիչ սիստեմական կերպով, բայց ոչ կանոնաւորապէս ամեն տարի։ Կարծիք կազմելու համար մեզ մօտ մինչ այժմ կարդացուած ժողովրդական դասախօսութիւնների բովանդակութեան մասին, պէտք է առնուազը ձեռքի տակ ունենալ այդ դասախօսութիւնները։ Մեր ձեռքը հասած են այդպիսի դասախօսութիւններից միայն մի երեք հատ, որոնց առիթով մենք կ՚աշխատենք մի քանի խօսք ասել մի այլ անդամ։ Այժմ մենք ուզում ենք յիշեցնել միայն, որ այդ փորձերի մասին մենք առիթ ենք ունեցել մի անգամ արդէն յիշատակելու (տես «Մուրճ» 1890 թ. № 5, Ամսւայ քրոնիկ), յայտնելով միաժամանակ թէ ինչ փորձեր են արւել Ռուսիայում այդ գործի նկատմամբ։ «Ռուսիայում, ասում էինք մենք, եկել են այն եզրակացութեան որ ժողովրդին, մանաւանդ անգրագէտ ժողովրդին, աւելի հասկանալի լինելու համար, աւելի օգտակար են ժողովրդական ընթերցումներ՝ սուերի տեսարաններով (публичныя народныя чтенія съ туманными картинами, նոյն յօդուած, երես 755)»։ Սուերի տեսարանները ստացւում են մի գործիքի միջոցով որ մոգական լապտեր է կոչւում։ Ի նկատի առնելով գործի նորութիւնը և այն յոյսերը որ կապում ենք մենք ժողովրդական ընթերցանութեան գործի զարգացման հետ, ուրախութեամբ

տեղ ենք տալիս ռուսաց «Նեդելիա» շաբաթաթերթի ներկայ յօդուածին [1]), որի թարգմանութիւնը պատկանում է «Մուրճ»-ի աշխատակից Բ-ին։

Ա. Ա.

Խուլ աշուն է։ Երկինքը մոխրագոյն է և ամպոյն։ Սկսում է մթնանալ։ Փոքրիկ և աղքատիկ գիւղի ծայրին մարդիկ են հաւաքւած։ Դրանց մեծ մասը մանուկներ ու դեռահաս երիտասարդներ են։ Ցուսած ցանկապատի մօտ մի ինչ որ բանի մասին վիճում է գիւղացիների մի խումբ։ Թումբի վրայ նստած են գոնչգոյն հագուստներով կանայք (օրը տօն էր)։ տան առաջ, սանդուխքների վրայ տեղաւորւել են երկու ծերուկ։ Կանայք երգում են, ճչող ձայներ հանելով. մանուկները խաղում են։ Հեռու, ճանապարհին, այնտեղ, ուր նա ծռւում է դէպի անտառին, երևում է տղայոց մի խումբ, որոնք «գնացել են լապտերը հանդիպելու»։ Եթէ դուք հարցնէք, այդ ինչ «լապտեր» է, ձեզ կը պատասխանեն, թէ «կայ մի այնպիսի հրաշալի լապտեր, որը իրանից մեծ լոյս է տալիս և կտաւի վրայ փոքրիկ պատկերից մեծն է հանում. զարմանալու մի բան է»։

Լապտեր գալը գիւղի համար մի նշանաւոր անցք է։ Դաշտային պարապմունքները վաղուց աւարտւել են, չտապելու գործ չկայ, գիւղացիները բաւականի աղատ ժամանակ ունեն, լինում են տաղտկալի ժամեր։ Աշնանային և ձմերային այս ժամանակը գրքի սիրահարների թիւը բազմանում է։ Մեր գաւառում այս միջոցին սակաւ կարելի է գիւղ հանդիպել, ուր այս կամ այն խրճիթում ընթերցումներ չը լինեն սարքւում. հաւաքւում են գրագէտները, հաւաքւում են անգրագէտները։ Ձրագին մօտենում է գրագէտներից մէկը, լաճախ մի որևիցէ փոքրիկ աշակերտ։ Վարժ չէ կարդում ընթերցողը, բայց ինչ հետաքրքրութեամբ են նրան լսում. իսկ եթէ գիրքն էլ հետաքրքիր է, լսել ցանկացողներից անկարելի է աղատւել, և գիրքը անցնում է խրճիթից խրճիթ։

Այս ընթերցումները առաջ են գալիս նոյնպէս ինքնաբերաբար, ինչպէս և գրագիտութեան ուսումնարանները։ Պահանջ է առաջ եկել—և ժողովուրդը նրան բաւականութիւն է տալիս, որքան կարող է, թէև նւազ, բայց իր միջոցներով։ Զը վախենալով չափաղանցութիւնից, մենք կարող ենք ասել, որ ինչտեղ կան գրագէտներ, այնտեղ կազմւում են այդպիսի գրականան երեկոյթներ, ընթերցումներ և նոյն իսկ գրականական շրջան-

---

[1]) Недѣля 1891 г. № 7.